

Ե. Միութեան բարձրաստիճանի մէջ պաշտօնատար Հինգշաբթի օր յայտնած է, թէ Կիպրոսի յոյն եւ թուրք ղեկավարներուն միջեւ բանակցութիւնները յուսատու են, եւ թէ առաջին անգամ ըլլալով վերամիացման գծով իսկական կայք կայ:

Ե. Միութեան ընդարձակման հարցերու յանձնակատար Կոնսթանտինոս Կիլիքիան յայտնած է, թէ Ե. Միութիւնը Կիպրոսի վերաբերեալ «որոշ շարժում մը բերած է կղզիին Միութեան նախատեսուած անդամակցութեան ճամբով: Այլապէս ոչինչ պիտի շարժէր», դիտել տուած է ան:

Կիպրոսի նախագահ Կրիսթոս Բիլիալու է Ե. Միութեան կիպրացի ղեկավար Ռաուֆ Տեւքթաշ Զորեքշաբթի օր որոշած էին բանակցութեան շարժումը ծրագրի մը ընթացքի մէջ դնել կղզիին տասնամեակներու տագնապը լուծելու:


ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԵՐԱԶԸ ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԿՈՒՎԱՍՏՈՒԹԵԱՍԲ ՆՇՈՒԵՑԱՐ Յ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 111ԱՄԵԱԿԸ

Կ. Ա. ՅՈՎԱՍԷՓԵԱՆ. «ԱՄԵՆ ՈՔ ՊԵՏՔ Է ՇԱՍԿԱՅ, ՈՐ ԼԻԲԱՆԱՆԱԸԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՆՁԻՆ ՉԷ»

Յ. ՄԻՒԹԵԱՐԵԱՆ. «Կ'ԱՌԱՋԱԴՐԵՆՔ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԱՄԲՈՂՋ ԼԻԲԱՆԱՆԱԸԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՉԼԱՑՈՒԱԾ ԻՐԱԿՈՒՆՔԸ»

Որքաթ, 18 Յունիս 2002ի երեկոյեան ժամը 8:00ին, «Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահին ներս մեծաշուք հանդիսութեամբ տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան 111ամեակի նուիրուած տօնակատարութիւնը՝ կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ներկայացուցիչ Նորայր Օ. Վրդ. Աշրգեան, Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, հայ կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Վարդան եպս. Սարգսեան, 11-գարեան, Կեր-



Հանդիսութեան սկիզբը լիբանանացի Լ. Յ. Դաշնակցութեան քայլերգներու ունկնդրութիւն: (Լուսանկարները՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)

74 ՆՈՐԱԳԻՐՆԵՐ ՏՈՒՆ ԻՐԵՆՑ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԻ ԵՐԿՈՒՄԸ

Հ. Յ. Դաշնակցութեան 111ամեակին առիթով, երեկ երեկոյեան 74 նորագիրներ տուին իրենց դաշնակցականի երդումը եւ միացան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ընտանիքին:

Երդման արարողութեան կնքահայրն էր Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Ալպէր Աճեմեան, որ իր խօսքը ուղղելով նորագիրներուն, ըսաւ, որ այսօրուան աշխարհաքաղաքական պայմաններուն մէջ, ուր Կովկասը կ'ենթարկուի քաղաքական, տնտեսական, ընկերային եւ պիտուրական ճնշումներու, Հ. Յ. Դաշնակցութեան դիմաց կը գտնուի հզօր Հայաստան մը կերտելու կենսական հրամայականը:

Օրուան կնքահայրը նշեց, որ նոր երդում տուող դաշնակցականը, եւ առ հասարակ բոլոր դաշնակցական շարքայինները իրենց առաւելագոյնը պէտք է նուիրաբերեն երաշխաւորելու համար բարօր Հայաստանի մը ստեղծումը, Արցախի ամրագրումը, Չախիքի հայութեան իրաւունքներու ապահովումը, ազգային հարապատարժեքներուն պահպանումը՝ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, եւ Հայկական Յեղափոխութեան միջազգային ճանաչումը:

Երդման արարողութիւնը փակուեցաւ «Մշակ Բանուոր» քայլերգով:

ճաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան (ՄԱՎԵՄ) կեդրոնական մարմինի ատենապետ վեր. դոկտ. Ժան Խանճեան, երկրաւար դուրսէն եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովսէփեան, երեսփոխան Ճորճ Գասարճի, նախկին նախարարներ Ծախէ Պարտուեան, Ժաք Չուխատարեան, նախկին երեսփոխաններ Աբրահամ Տէտեան եւ Նուրիճան Տեմիրճեան, Հ. Յ. Դ. Բիւրոյի լրիւ կազմը, Լիբանանի մէջ Հայաստանի ղեկավար Արեգ Յովհաննիսեան, Ս. Դ. Հ. Կի եւ ՌԱԿԻ Ծրջանային մարմինները ներկայացնող պատուիրակութիւններ, Կեդրոնական

Դրամատան փոխ կառավարիչ Յարութիւն Սամուէլեան, կեդրոնական քննիչ խորհուրդի մօտ ընդհանուր քննիչ Ժան Պէլեան, Պորճ Համուտի



Մ. Գարագաւորեան քաղաքապետ Անդրանիկ Մարրեան, Այնճապատուիրակութիւններ, Կեդրոնական

լէստի մէջ Լիբանանի նախկին ղեկավար Վաչէ Նիրբէթեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Բիւզանդ Թորիկեան, Լիբանանահայ միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ խոնարհեալ քաջամուրթիւն մը:

Հանդիսութիւնը սկսաւ Լիբանանի եւ Հ. Յ. Դաշնակցութեան քայլերգներուն յունկայս ունկնդրութեամբ, որմէ ետք բացման խօսք կատարեց Մելիք Գարագաւորեան: Ան ըսաւ, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը այն կազմակերպութիւնն է, որուն հիմնադրութեամբ դարձել է վեր ստրկացած եւ կործանման եզրին հասած հայութեան ճակատագրին մէջ ստեղծուեցաւ շրջադարձային բեկումն մը, որ հայութիւնը վերադարձուց իր ինքնութեան:

Ան հաւաստիացուց, որ տակաւին պիտի շարունակուի պայքարը՝ ի խնդիր Համազգային իտէլայներու իրագործման եւ հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներու ձեռքբերման:

Ապա ցուցադրուեցաւ Հ. Յ. Դ. Լիբանանի քարոզչական մարմինի պատրաստած եւ «Դաշնակցական Տղերքը» խորագիրը կրող տեսաւերկը, որ նուիրուած էր Հ. Յ. Դաշնակցութեան նախատակներուն:

Խօսք առաւ Հ. Յ. Դ.



Յ. Միխրաբեան



Կ. Ա. Յովսէփեան

Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յ. Միխրաբեան: Ան փոխանցեց Հ. Յ. Դաշնակցութեան սկզբունքային մօտեցումները՝ համարաշին համայնքներու հաւասարակշռուած գոյակցութեամբ հիօրացող մէկ եւ անբողջական Լիբանանի նկատմամբ:

Յ. Միխրաբեան անդրադարձաւ Թաէ-ցուրեան սկզբունքային մօտեցումները՝ համարաշին համայնքներու հաւասարակշռուած գոյակցութեամբ հիօրացող մէկ եւ ան-

Հ. Յ. Դ. ԼԻԲ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ՆԵՐԿԱՅՆԱՅՈՒՑԻՉ ՄԻՒԹԵԱՐԵԱՆԻ ԽՕՍԱՔԸ

Հ. Յ. Դաշնակցութեան Համար սովորութիւն դարձած է ամէն տարեկան Վերջին, Դաշնակցութեան օրուան առիթով ներկայացուցած ժողովուրդին եւ անցած տարուան հաշուետուութիւնն ու գնահատուածը կատարելու, արժեւորելու լայն ու զրաւանք եւ ընդունելու թերութիւններն ու բացթողումները՝ գանձեք սրբագրելու միտումով: Եւ ահա, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Լիբանանի կեդր. Կոմիտէին կուսակցութեան 111ամեակին առիթով կազմակերպուած Դաշնակցութեան օրուան այս տօնակատարութեան կու գայ իր ժողովուրդին, իր Համակիր գանձուածին Հետ անգամ մը եւս միասին ըլլալու եւ բարձրաձայն խորհրդածելու այն հարցերուն մասին, որոնք

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ Վ. Ա. ՅՈՎԱՍԷՓԵԱՆԻ ԽՕՍԱՔԸ

Հանդիսաւոր այս պահուն, երբ հաւաքուած ենք տօնախմբելու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Օրը, անշուշտ լաւ կ'ըմբռնենք, որ դասական հասկացողութեամբ այս օրը հաշուետուութեան առիթ է անկասկած, այն օրը եւ վայրը, երբ ժողովուրդի ծառայութեան իր ծնողին, իր գոյութեան իմաստը հանդիսացող Հայ ժողովուրդին: Բայց Դաշնակցութեան Օրը եւ այս հանդիսութիւնը կը պարպուին իրենց իրենց իմաստէն, եթէ մեր, այսինքն, Դաշնակցութեան հաշուետուութիւնը եւ անոր առիթ տուող այս տօնախմբութիւնը չվերաբերին մեր հազարամեակային ինքնութիւնը իրենց մեր հաւաքական գործին սլացք տուող մեկնակէտի, առիթի: Հետեւաբար, հաշուետուութեան պէտք է ընկերանայ նաեւ ապագայի տեսլականը եւ անկէ բխող պատգամը, զորս այս պահուն իրրեւ ծանր պատասխանատուութիւն վիճակուած է ինձի:

Դաշնակցութեան կատարած աշխատանքներուն եւ ծրագրիներուն մասին հաշուետուութիւն կատարելը, գուցէ տակաւին դիւրին բաժինն է, մանաւանդ երբ հպարտ ենք մեր գործունէութեամբ ու զլխագիր ԳՈՐԾով: Դժուարագոյնը, սակայն, փորձել ձգտելն է մեր նախորդ սերունդի առիթնող ղէմբերուն՝ Կարօ Սատուիններուն, Սարգիս Զէյթլեաններուն, Բարգէն Փափագեաններուն, Հրաչ Տասնապետեաններուն ու Հրայր Մարտիկեաններուն, մէկ խօսքով մեր ժողովուրդի Մեծ երազին նուիրուած առաքելներուն երբեմնի փոխան-

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ...

Շարունակում Ա. Էջէն

Թիւերը պատկերացնելու, ըմբռնելու:

Հորիզոնական, այսինքն աշխարհագրական հասկացողութեամբ խօսքը համաշխարհային տարրողութեամբ աշխատանքի մասին է. գործ, որ կը տարածուի աշխարհի բոլոր ծագերուն, իւրաքանչիւր երկրի ու քաղաքի մէջ ուր բռնու մը հայութիւն կայ որ կարիքներ ունի ու պայքարելու վճարակամութիւն:

Իսկ ուղղահայեաց կտրուածքով, այսինքն հարցերու, խնդիրներու, օրակարգերու բազմազանութեան գծով իսկապէս բարդ «անելիքներ» ու աշխարհի մը մասին է խօսքը: Կը բաւէ աչք մը նետել Դաշնակցութեան որեւէ ներկայացուցչական ժողովի մը օրակարգին վրայ, տեսնելու ու հասկընալու համար, որ գործին մաս կը կազմեն ոչ միայն ազգային կամ քաղաքական հարցեր, այլ մեր ժողովուրդի դիմագրուած տնտեսական, բնակչային բազմաթիւ մարտահրաւէրները, մինչեւ իսկ մշակութային, կրթական, որակաւորման խնդիրներ, եւ դեռ շատ-շատ ուրիշներ:

Այս բոլորը, թէ՛ գործի աշխարհագրական տարածքի իմաստով ու թէ՛ աշխատանքի շուկայի իմաստով արդէն ոչ միայն պետական մակարդակի գործ է, որ կազմակերպութիւնը տարած է տասնամեակներ շարունակ, այլ միջազգային, միջպետական հաստատութեան մը յատուկ հսկայական ճիգ է: Պէտք է հասկնալ սա, ճիշդ գնահատելու համար աշխատանքն ու անոր արժէքը: Այս իմաստով է, որ թերեւս հպարտութեամբ կը մերժենք ներկայացուցի կամ հաւասարեցուցի մեր իրականութեան մէջ գոյութիւն ունեցող որեւէ այլ կառույցի կամ կուսակցութեան:

Բայց խնդրեմ, կատարած այս նշումներս թող Դաշնակցութեան հաշուոյն ինքնագովութիւն չեն հանրապէս, ձեր փորձառութեամբ լաւ գիտէք, թէ՛ ռո՛վ եղած է պետական կառուցներու ծառայութիւնները կատարողը այս գաղութի կեանքին ներս, երբ պետութիւնը ինքը առկայ է: Արցախահայութիւնը լաւ գիտէ, իսկ ջաւախքահայութիւնը շատ լաւ գիտէ, որ իր շահերը ու պաշտպանած է ու կը պաշտպանէ, երբ պետութիւնը դժկամ է կամ բացակայ: Վերջապէս, Ուսուցիչներն ու մանկավարժներն արդէն իրենց անհատական հասկացած է, որ որուն հետ գործ պէտք է ունենալ երբ ամբողջականութեան խնդիրներուն գծով որեւէ կառույցի պէտք է որ դիմէ:

Սակայն, ակնարկ մը նետենք ուրեմն վերոյիշեալ հսկայ գործին ենթաբաժանումներէն ոմանց, ու սահմանենք այդտեղ ի գործ դրուած մեր քաղաքականութիւնը եւ տարած աշխատանքը, սկսելով Հայաստան աշխարհէն:

Խորհրդային Միութեան փլուզումէն աւելի քան տասը տարիներ ետք, մեր Հանրապետութիւնը երկար ճամբայ կտրած է, ու հասնելու կը գարգանայ օրական ռիթմով: Ինչ խօսք, որ հո՛ն Հայաստանի մէջ, կը համեմատեն Հիւսիսային Կարիքային վարչակարգէն մնացած կառուցային, սիւսքեմիք երեւոյթները, քաղաքական մշակոյթ, եւ արմատ նետած տնտեսական շահեր: Եթէ կը խօսուի, օրինակ, կոռուպցիոյ յի կամ մաֆիայի առկայութեան մասին, խօսքը նորեկի իրավիճակի մը կամ նոր ստեղծուած տնտեսութեան մասին չէ, այլ այդ միջուկն էն ինչ կառուցներուն (եւ մշակոյթին) որ գոյութիւն ունեցած են երկար ժամանակ, եւ բայց որոնց շարժիչները փոխուած են այսօր:

Աւելին, եթէ կը խօսինք Հայաստանի քաղաքական մշակոյթի ու ժողովրդավար կառուցներու հաստատուն նացման պրոցեսի դանդաղութեան մասին, հոն պատճառը այն չէ որ հայ մարդը կամ Հայաստանի ժողովուրդը դժուարութիւն ունին ըմբռնելու ժողովրդավարութիւնը, այլ որովհետեւ մաշեցող ու ճնշող են տասնամեակներէ ի վեր հաստատուած ու արմատ նետած կառուցներն ու անոնց փոխարարներն են:

Այսպէս, պարզ ակնարկ մը Առաջին Հանրապետութեան փորձառութեան վրայ բաւարար պիտի ըլլայ տեսնելու համար, թէ՛ հայը որքան ջերմ ջատագով է ժողովրդավարութեան ու ժողովրդավարական կարգերուն: Պատկերացուցէք որ 1919 Յունիսին, Հայաստանի ժողովուրդը երկու կին ընտրեց որպէս խորհրդարանի անդամ: Միւս կողմէ՛ Միացեալ Նահանգները, ժողովրդավարութեան ջանքերը ներկայացող Միացեալ Նահանգները, 1920 Օգոստոսին (1 տարի 2 ամիս ետք) տակաւին նոր կիններուն ընտրելու իրաւունք չնորհեց:

Կամ նոյն ընտրութիւններուն՝ հազիւ 3-4 տարի առաջ թուրքերու կողմէ կոտորուած հայութիւնը 4 թուրքեր կ'ընտրէր խորհրդարանի անդամ, յարգած ըլլալով թրքագրի փոքրամասնութեանց մարդկային իրաւունքները: Այս է հայը, ժողովրդավարութեան, մարդու

իրաւունքներու ու հաւատարմութեան պաշտպան է հայը:

Այսօր, Հայաստանի Հանրապետութեան քաղաքական դաշտը կը բնութագրուի իշխանամէտ եւ ընդդիմադիր ճակատներու առկայութեամբ: Կան ուժեր-գանձեր չեմ կոչել քաղաքական կուսակցութիւններ, որովհետեւ անոնց շատ անգամ կը պակսին հասուն կուսակցութեան մը կառուցն ու յատուկութիւնները - ուժեր, որոնք կամ կը յարատեւեն իրենց շուկայն ու սնունդը ստանալով օրուան իշխանութիւններէն, կամ այլ ճանց գոյատեւելու համար կը խուսափին իշխանութիւններուն հետ նուազագոյն առնակատումէն: Միւս ճակատը, ընդդիմադիր ճակատը, առանց բացառութեան կազմուած է նախկին իշխանաւորներէ: Ըլլան անոնք խորհրդային իշխանութիւններու մնացորդացը կամ շուտաւիղները, ըլլան անոնք ՀՀՇ-ի եւ անկէ սնող կառույցները, բոլորն այլ իշխանութեան եկած, իշխանութիւնը չարաչար շահագործած եւ իշխանութեանն հետագած ուժեր են:

Այս երկու ճակատներէն անջատ եւ անոնցմէ անդին՝ կանգ մենք՝ կայ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Մեզի համար անընդունելի է ուսուցիչական ուժերու վերադարձը իշխանութեան գլուխ, որպէս յոռեգոյն շարիք: Միաժամանակ Դաշնակցութիւնը չի կրնար կոչուիլ կամ ինքնաբերաբար վերածուիլ իշխանութեան կառքին լծուած կուսակցութեան այդ մէկը մեր պատմական առաքելութեան, նկարագրին եւ դաւանած սկզբունքներուն անյարիր է:

Դաշնակցութիւնը իր ինքնուրոյն քաղաքականութեամբ իր առանձին տեղն ու դերը արդէն հաստատած է Հայաստանի քաղաքական դաշտին վրայ: Թէ՛ Դաշնակցութեան գաղափարի հզօրութեան պատճառով, թէ՛ այլ պետական թէ՛ հասարակական գործի մէջ գտնուող մեր ընկերներուն արժանապայել ու օրինակելի ընթացքին պատճառով: Հետեւաբար, մենք ջերմօրէն գնահատողն ենք այս իշխանութեանց կողմէ որդեգրութեանց շնորհքը:

Եւ այն քաղաքական քայլերուն եւ ծրագրերներուն, որոնք, ի տարբերութիւն նախկիններուն, կը ներշնչուին մեր ազգային նպատակներէն: Այս իմաստով պէտք է յատուկ գնահատանքով ընդգծել իշխանութեանց կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման եւ արտաքին ճակատի վրայ ընդհանրապէս, մեր ազգային իրաւունքներուն եւ պահանջներուն գծով ցուցաբերուած վերաբերումը: Միւս կողմէ, չենք կրնար անտարբեր մնալ ու լռել, օրինակ, ի տես ընկերային-տնտեսական ընդհանուր ներս իշխանութեանց ցուցաբերած անվճարականութեան ու դանդաղութեան: Աւելին, ակնկալուող ենք ու պահանջողը որ նախագահ Քոչարեան տէր կանգնի իր ընտրական խոստումներուն եւ յստակ ու կտրուկ քայլեր վերցնէ սկիզբ դնելու կոռուպցիոյ բարդ եւ բազմաբնույթ լոյթին դէմ պայքարի պետական ազդեցիկ քաղաքականութեան մը: Այս գծով Դաշնակցութիւնը պատրաստած է ու վերջերս տրամադրելի դարձուցած՝ կոռուպցիոյ հետքերը սանձող եւ վերացնող փրոֆեսիոնալ ծրագիր մը:

Եւ ուրեմն, կը մերժենք պիտակաւորուիլ որպէս իշխանամէտ կամ ընդդիմադիր, ոչ թէ անոր համար որ զժողովրդիւնը ունինք մէկը կամ միւսը ընտրելու, այլ, որովհետեւ անհրաժեշտութիւնը չենք տեսներ ընտրութիւն կատարելու: որովհետեւ, քաղաքական իրատեսութիւնը եւ այսօրուան իրականութեան սառնասիրտ վերլուծումը կը թելադրեն գուրգուրալ մեր երկրի կայունութեան ու քաղաքական մշակոյթի գարգացման հոյովոյթին վրայ: Մեզի համար ազգային պետականութեան կայացումը եւ մեր հայրենիքի անվտանգութիւնը լոկ քաղաքականութեան, այլ նուիրական արժէքներ: Աւելին, անոնք հրամայականներ են, որոնք բարդ ակնկալութիւններով կը ներկայանան, որոնք պիտակները կը մերժեն: Կը մնայ ուրեմն, կառուցողական կերպով ու ռազմավարական յստակ կողմնորոշութեանց կողմէ որդեգրութեանց շնորհքը:

Շար.՝ Էջ 10



Arabsat 3A at 26° East Freq. 11.785 GHz, Nilesat 7° West Freq. 12.130 GHz

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹՈՐՈՍ ԱՌՍԼԻՆ
ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԱՎԱԴԵՄԻԱ
ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՆԴԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՈՑ
ՍԿՍՆԱԿ ԵՒ ՍԻՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍԱՍՒԵՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
ՅԱՏԿԱՊԷՍ ՏԻԿԻՆՆԵՐՈՒ

Աշխատանքի առաջին համադրուող տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 4 Փետրուար 2002ին, Նշան Փալանճեան ճեմարանի մէջ, Չորաք Էլ Պլաթ:

Մանրամասնութեանց համար հեռաձայնել թորոս Առսլին Կերպարուետի Ակադեմիա, ամեն օր կեսօրէ ետք ժամը 3:00Էն 6:00, իսկ Շաբաթ օրերը ժամը 11:00Էն 4:00, հետեւեալ թիւերուն՝ 01-265899 եւ 01-249375:

ԵՍՆՕԹ. Կառատունը ապահովուած:
Թ. ԱՌՍԼԻՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԱՎԱԴԵՄԻԱ

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՆՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԾԵՑ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պենզին, մագնիս, իւրին, ինչպէս նաեւ լուալու համար, վաճարումին հետ միաժամանակ ներկայացուցէք **FUEL CARD-ը**, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագրերուն յաջողութեան:

ԻՆՉՊԷՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կերպովներէն.-

- ԱՅՏԻԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
- Շամազգայի մի գրախանութ, Պուրճ Համուտ
- Գրատուն Caravelle, Չալքա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիլիաս

- FUEL CARDԸ ԿՐՆԱԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԴԵՏԵԻԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՍԷՋ**
1. CORAL JAL EL DIB, Ժել Էլ Տիա
 2. HYPCO ANTELIAS, Շարաք Ալ Դաուրն
 3. SPEED ANTELIAS, Կաթողիկոսարանի դիմաց
 4. CORAL BAABDAT, Պապուտեք մայրուղի
 5. SPEED ACHRAFIEH, Էլ Նաիր PEUGEOT ընկ. առաջ
 6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանէ առաջ
 7. MEDCO KARANTINA, Զարանքի մայրուղի
 8. CORAL BHAMDOUN, Դամասկոսի մայրուղի
 9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիխայէլ, Սաստ պողոտայ
 10. SPEED ALTIHAD, Կալեթի Իթթիհատ
 11. MANAR FANAR, Ֆանար, Նատր պանդոկին կից
 12. CALTEX ANJAR, Այնճար
 13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
 14. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորայ, «Ալմազա»-ի կից
 15. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սիւն Էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ՔԱՐՏԸ ԿԸ ՍՍԱՆԱԸ ԶՐԻՕՐԵԼ

ԱՐԺԷՔՄԻՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

ՉՍՍԱՌՈՒ ՏԻՐԱՍՕՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՉՍՍԱՌ, Հեռ. 09-262706 կամ 09-262664
 ԺՈՒՆԻԵ, Հեռ. 09-935188 կամ 09-636671

Ուրախութեամբ կը ծանուցանէ ժուճիի շրջանի մեր հաւատացեալներուն

ԿԻՐԱԿԻ, 13 ՅՈՒՆԻՍԻՆ 2002ԷՆ ՍԿՍԵԱԼ

ԱՄԷՆ ԿԻՐԱԿԻ ԿԵՍՕՐՈՒԱՆ ԺԱՍԸ 12:30ԻՆ,

ՀԱՅԱԾԵՍ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՅՈՒԻ

Ժուճիի վանքին նախկին ընծայարանին մատրան մէջ, ժուճիի հրապարակին մօտ, «Քրէյմ» տպարանին դիմաց: Սիրով հրաւիրուած են շրջանի հայ հաւատացեալները:

ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Սարգիս գորավարի տօնը այս տարի կը զուգահեյ պիտի Կիրակի, 27 Յունուար 2002ին: Ինչպէս ամեն տարի, այս տարի եւս տեղի պիտի ունենայ աւանդական մատաղի օրհնութիւն եւ սոմախմբութիւն:

Ուստի, բոլոր այն հաւատացեալները, որոնք երեք օրուան ծոմապահութեան ուխտի մէջ են, Սուրբ Լազարիութիւն պիտի ստանան Չորեքշաբթի, 23 Յունուար 2002, առաւօտեան ժամը 6:00Էն սկսեալ:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻՈՅ

ԲԱՅՈՒԱԾ Է ԱՐԴԵՆ TECHNO VISION KODAK EXPRESS ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ

- Շարանակալ եւ ձեռնարկներու - video երկրագիտութեան:
- Իրաքանչիւր նկարահանման հետ մէկ ֆիլմ եւ ալպոմ մը ձրի:
- Նկարի յանձնում՝ 10 վայրկեանէն:
- Passportի նկարի յանձնում՝ 2 վայրկեանէն:


Հասցէ. - Չալքայի օթոսօրատ, **MAGIC FIRE**ի կից:
 Հեռ. 01-888829 եւ 03-615028, առաւօտեան ժամը 6:30Էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ԱՐՈՒՍ ԵՒ ՎԱՍՅԱՆՑ

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ. ԱՐՈՒՍ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԼՈՒՑՈՒԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԷՄՆ ԾՐԱՆԻՆ»



Շիբակոյի «Պիբլեց Սթրիթ Կեյթրին» Մարտ 10-ին սկսեալ պիտի հիւրընկալէ իւրապատեակ ցուցահանդէս մը՝ նուիրուած ցեղասպանութեան յիշողութեան: Գուցահանդէսին նուիրուած <http://inheritance.beaconst.org/> հասցէով կայքը մանրամասնօրէն կը ներկայացնէ ցուցահանդէսին նպատակը եւ մասնակցող արուեստագէտները:

«Ժառանգութիւն. արուեստ եւ պատկերներ լուսնուած ցեղասպանութենէ մը անդին» խորագրեալ այս ցուցահանդէսին կազմակերպիչներէն նախ՝ Փրիմեան կը բացատրէ, որ «ասիական հաւաքական ճիզն է տարբեր ունեցող ամերիկացի 9 արուեստագէտներու, որոնք թէեւ զիրար չեն ճանչնար, սակայն ունին հասարակաց փորձառութիւններ» իրրեւ ժառանգորդները ճանաչում չստացած մեծ ողբերգութեան մը, որ տեղի ունեցաւ 1942 թ. Դեկտեմբեր 7-ին Օսամանեան թուրքիոյ մէջ»:

Գուցահանդէսի թեմայի մասին խօսելով՝ Փրիմեան կ'ըսէ, թէ արծարծուած է ցեղասպանութեան հանդէպ լուսնութեան իրրեւ արդիւնք՝ «Թրուումա»ի սերունդէ սերունդ փոխանակման հարցը:

Կայքին մէջ յատուկ բաժին յատկացուած է ցուցահանդէսին մասնակցող արուեստագէտներ թիւն Պասթաճեանին, Ժան - Մարի Գասպարեանին, էլլին Քլաւուի, Ժաքլին Տուանիանին, Տահլիա Էյսայիտի, Ճոն Մաստեանին, նախ՝ Փրիմեանի եւ էլլին Շահպազեանի: Իւրաքանչիւր արուեստագէտին մասին ներկայացուած են հակիրճ տեղեկութիւններ, անոր գործերէն նմուշներ, ինչպէս նաեւ արուեստագէտին մտածումներն ու զգացումները՝ ցուցահանդէսին մէջ տեղ գտած իր ստեղծագործութիւններէն մէկուն մասին:

Կայքին «Քարալոկ» բաժինը այցելելով կարելի է ապսպրել այս ցուցահանդէսին նուիրուած 28 էջնոց նկարներու գրքոյի:

«ԷՄ. Փի. 3» ՖԱՅԼԵՐՈՎ ԵՐԳԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԻ ԵՐԵՒՈՅԹԸ

Համակարգչային արհեստագիտութիւնը համացանցը օգտագործողներուն առիթ կ'ընծայէ իրենց համակարգիչին մէջ արձանագրել ցանկացած երգ կամ երաժշտական կտոր, շնորհիւ գրութեան զարգացումին, որ համացանցի միջոցով երգերու փոխանակումը մեծապէս դիւրացուցած է:

ԻՆՉ Է «ԷՄ. Փի. 3»

Երաժշտական աւանդական ամփոփ սկաւառակներ (Մի. Տի.) կը նուագեն «աւալոկ» գրութեամբ՝ երաժշտութիւնը «կը կարգացուի» ամփոփ սկաւառակին «խորտուրդ» մակերեսին ելեէջներուն համեմատ: Միւս կողմէ, համակարգիչները երաժշտութիւնը կ'արտագրեն թուային (տիճիթ) գրութեան օգտագործումով: Այստեղ, ամփոփ սկաւառակի մակերեսին ելեէջները «կը վերածուին» թիւերու շարքի մը (ալկորիթմ) եւ ապա՝ ձայնային ալիքներու (WAV ֆայլեր): Այս ֆայլերն անպատեհութիւնը իրենց ծաւային է, որ կը դժուարացնէ փոխանակումը ու արձանագրութիւնը: «ԷՄ. Փի. 3» գրութիւնը լուծում րեբաւ այս դժուարութեան:

«ԷՄ. Փի. 3» անուանումը կու գայ «Տր Մուլ» վիճակ փոքր էքսպրեսիոն կրուի» ընկերութեան անունէն: 1987-ին հիմնուած գերմանական այս ընկերութեան նպատակն էր ստեղծել երաժշտութեան ամբարանի գրութիւն մը, որ պահելով հանդերձ ձայնային որակը, համեմատաբար նուագ ծաւալ կը պահանջէր: Օգտագործելով այն իրողութիւնը, որ մարդ կային ալանը WAV ֆայլի մը բոլոր ձայնային յաճախականութիւնները չէ, որ կը լսէ, ընկերութիւնը դուրս կը ձգէ «աւելորդ» յաճախականութիւնները, WAV ֆայլին ծաւալը փոքրացնելով 22 անգամ:

Երգերու ձայնային որակը պահպանելու համար հարկ է ֆայլերը «ԷՄ. Փի. 3» գրութեամբ խտացնել ոչ աւելի քան 10 անգամ: Այսպիսով, երաժշտական կտորները կը պահեն իրենց որակը



եւ շատ աւելի փոքր ծաւալի մէջ կը տեղադրուին:

4,8 վայրկեան տեւողութեամբ երգ մը «ԷՄ. Փի. 3»-ով խտացուած, կարելի է արձանագրել 45 երկվայրկեանի մէջ, եթէ օգտագործուի «Քէյպլ» մոտեմ մը, իսկ 11 վայրկեանի մէջ հեռաձայնային ելեէջները «կը վերածուին» թիւերու շարքի մը (ալկորիթմ) եւ ապա՝ ձայնային ալիքներու (WAV ֆայլեր): Այս ֆայլերն անպատեհութիւնը իրենց ծաւային է, որ կը դժուարացնէ փոխանակումը ու արձանագրութիւնը նաեւ ծախսի չի կարօտիր: Շնորհիւ այս գրութեան կարելի է համացանցէն ձեռնարկել արձանագրել ցանկացած երգ: Ամփոփ սկաւառակներ արձանագրող սարքերու եւ «ԷՄ. Փի. 3» փէյլըներու շնորհիւ կարելի է թուանուած գերմանական այս ընկերութեան «աւալոկ» ֆայլերու:

«ԷՄ. Փի. 3» ֆայլերու արձանագրութիւնը նաեւ ծախսի չի կարօտիր: Շնորհիւ այս գրութեան կարելի է համացանցէն ձեռնարկել արձանագրել ցանկացած երգ: Ամփոփ սկաւառակներ արձանագրող սարքերու եւ «ԷՄ. Փի. 3» փէյլըներու շնորհիւ կարելի է թուանուած գերմանական այս ընկերութեան «աւալոկ» ֆայլերու:

«ՆԷՓՄԸՐ»

ԵՐԵՒՈՅԹԸ

1999-ին, Շոն Ֆանինկ անունով ուսանող մը ստեղծեց երաժշտութեան փոխանակումի իւրապատեակ ձև մը, որ հիմնուած է երգերը «բաժնեկցելու» գրութեան վրայ: www.napster.com հասցէով կայքին մէջ տեղադրուած «ՆէփՄԸՐ» անունով ծրագրիին օգտագործումով, համացանցը օգտագործողները առիթ ունեցան զփոխանակու, թէ իրենց ուզած երգեր, որոնք համակարգիչին մէջ կը գտնուի, եւ կապ հաստատելով անոր հետ՝ արձանագրել երգը: «ՆէփՄԸՐ» յեղաշրջեց երաժշտասէրներու աշխարհը: 65 միլիոն մարդ սկսաւ օգտուել «ՆէփՄԸՐ»-ի ընձեռած կարելիութենէն:


Սակայն երգի ճարտարարուեստը ձրի արձանագրութեան այս երեւոյթը նկատեց հեղինակի իրաւունքներու ոտնակոտում, առարկելով թէ «ՆէփՄԸՐ» միլիառաւոր տոյարներու վնասի կրնայ ենթարկել Սի. Տի.ները արտագրող ընկերութիւնները: 1999-ին 2001 երկարող դատավարութիւնները ի վերջոյ ակարտեցան այս ընկերութիւններուն ի նպատակ: «ՆէփՄԸՐ» ստիպուեցաւ արգիլել իր կայքին միջոցով փոխանակումը այն երգերուն, որոնց հեղինակային իրաւունքները վերապահուած էին:

Սակայն, հակառակ այս իրողութեան, երաժշտութեան փոխանակումը դիւրացնող կայքերու թիւը տեւաբար աճ կ'արձանագրէ: www.audiogalaxy.com եւ www.bearshare.com նման կայքեր կը շարունակեն գործել «ՆէփՄԸՐ»-ի նման: Կը թուի թէ անկարելի է դադարեցնել աշխարհով մէկ տարածուած «ԷՄ. Փի. 3» ֆայլերու ազատ փոխանակումը:

www.hamazkayin.com

ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՁԻՉԱՅԻՆ ՀԵՌԱՉԱՅՆՆԵՐՈՒ ԲԱՐԳԵՐԸ ԼԻՑԻԱՅԱՌԵԼՈՒ ՆՈՐԱԳՈՅՆ ՉԵՒՄԸ




Աշխարհի մը մէջ, ուր օրըստօրէ մարդիկ աւելի կ'ախտալ կը դառնան իրենց բնիջային հեռաձայններէն, բարդերու պարպուիլը լուրջ հարց մըն է: Միացեալ Նահանգներու մէջ արդէն հրապարակի վրայ են նորագոյն սարքեր, որոնք առիթ կ'ընձեռեն բնիջային հեռաձայններու բարդեր լիցքաւորելու... մկանի ուժի օգտագործումով:

Այս սարքերու կարգին է «Ալատտին Փաուըր»-ը, որ կ'արժէ 60 տոյար: 12 սանթիմետր բարձրութեամբ եւ 4 սանթիմետր լայնքով այս սարքը կարելի է կապել տարբեր մակնիշի բնիջային հեռաձայններու: Ձեռքի մարգանքի յատուկ սարքեր յիշեցնող այս սարքը շուրջ 3 վայրկեան սեղմելով կարելի է դիւրութեամբ լիցքաւորել անոր բարդը:

Նոյեմբերին «Մոնոթրոլլ» ընկերութիւնը պիտի հրապարակէ մկանի ուժով բնիջային հեռաձայններու բարդեր լիցքաւորող այլ սարք մը՝ «Յիթ Չարճ»: Սարքը պիտի վաճառուի ընկերութեան համացանցի կայքին միջոցով:

«Ալատտին Փաուըր»-ի եւ «Յիթ Չարճ»-ի մասին յաւելեալ տեղեկութիւններ ունենալու համար կարելի է այցելել www.aladdinpower.com եւ www.freeplay.net կայքերը:

ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ԴԻՄԱԳՐԱԿԱԾ ԴՓՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸՆ՝ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ



Ոչ զքի սեփականութիւնն է համացանցը եւ ոչ ոք կը ղեկավարէ գայն, սակայն աւելի քան կէս միլիառ մարդոց համար համացանցը անհրաժեշտութիւնն է: 1990-ականներու կէսերուն կարգ մը մասնագէտներ զիտել տուին, որ համացանցը պիտի չկարենայ շարկել գայն օգտագործողներու թիւին աճը: Այս նախատեսութիւնները սխալ դուրս եկան, սակայն համացանցը այսօր կը զիմագրաւէ այլ գոտարութիւններն եւ սպառնալիքներ, որոնցմէ զլիւսաւորը ապահովութեան հարցն է:

Համացանցը օգտագործողներու թիւին աճով կեանքի բոլոր բնագաւառները իրենց ներկայութիւնը ունենցան համացանցի մէջ եւ անոր միջոցով կարելի եղաւ գնումներ կատարել, նամակներ, գրուել եւ... գողնալ: Երկարտոնային գողութիւնը համացանցի բառապաշարով՝ «ՆէփՄԸՐ»-ը, քրեալիք բարտերու թիւերը բացայայտելով՝ ընկերութիւններէ եւ անհատներէ դրամ գողնալ չէ միայն, այլ կ'ընդգրկէ նաեւ անձնական տեղեկութիւններու գողութիւնը:

Համացանցը կեդրոնական ապահովական գրութեամբ մը օժտուած չէ: Իւրաքանչիւր «սերվըր»-ի կամ համակարգիչի ապահովութիւնը նախ եւ առաջ անոր տիրող պատասխանատուութիւնն է: «Ճայլըրուոյ»-երու եւ հակաժարային ծրագրիներու օգտագործումով կարելի է տարրական ապահովութեամբ օժտել համացանցին կապուած համակարգիչները, սակայն համացանցը օգտագործողներու անհոգութեան կամ անտեղեկութեան պատճառով, ինչպէս նաեւ «ճէքըր»ներու հետըզհետէ զարգացող գործունէութեան իրրեւ հետեւանք համացանցին կապուած համակարգիչներ կը մնան երկարտոնային գողութեան վտանգին ենթակա:

Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶԻ ԱՆՎՃԱՐ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՉԳ. ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ ԲՈՒԼԵՃ Ա., Բ. ԵՒ Գ. ՅԱՆՔՐՈՒԱՆ

ԱԿ. ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ քուէճը ուրախութեամբ կը յայտարարէ, որ վարժարանի Կրկնական Համակարգիչի Կեդրոնին մէջ հաստատուած համակարգիչի անվարձ դասընթացքի նախորդ հանգրուաններու յաջողութեան մը, ծրագրած է յաւելել յարսնութեանը:

Ա., Բ. ԵՒ Գ. հանգրուաններու նոր շրջանի դասաւանդութիւնները կը սկսին Երկուշաբթի, 21 Յունուար 2002-ին եւ տեղի կ'ունենան Երկուշաբթի, Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի օրերը, կէսօրէ ետք ժամը 4:00-8:30, տարբեր դասարաններով:

Իւրաքանչիւր դասարան կը բաղկանայ 17 հոգիէ:

Արձանագրութիւնները կը կատարուին քուէճի քարտուղարութեան մօտ, Հինգշաբթի 10 Յունուար 2002-ին սկսեալ, ամէն օր, առաւօտեան ժամը 9:00էն 2:00:

Ա. հանգրուանին կը դասաւանդուին հետեւեալ նիւթերը.-

- Introduction to Computers
- Introduction to Windows (Operating system)
- Microsoft Word
- Microsoft Excel
- Introduction to Internet

Բ. հանգրուանին կը դասաւանդուին հետեւեալ նիւթերը.-

- Microsoft Word Level II
- Microsoft Excel Level II
- Microsoft Power Point
- How to use Internet

Գ. հանգրուանին կը դասաւանդուին հետեւեալ նիւթերը.-

- Introduction to Database
- Introduction to Graphics
- Introduction to viruses and antiviruses programs
- Internet

ՏՆՕՐԸՆՈՒԹԻՒՆ

VALSE International Cosmetics

Armen Hamazkayin & Co.
DORA - Magie Al-Hajj Str. - Tel: 01-265449
Fax: 01-324617 - P.O.Box: 90-150 Beirut-Lebanon

Մանկապատանեկան



ԹՈՒՂԹԷ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Քանդակագործ Մարիոն Լամի կը գործածէ թուղթը, որ շատ դիրքաբեկ եւ փափուկ միւթ մըն է, ներկայացուցելու համար կեանքին շարժումները:

Մարիոն Լամի յաճախ արհեստը փոխած է: Ան եղած է ջուլհակ, տարագներ ձեւագծող, բեմայարդար: Այժմ ան կը զբաղի թուղթէ քանդակներ շինելով: Սակայն ան հետաքրքրուած է յատկապէս մարդկային մարմնով եւ անոր շարժումներով: Լամի ուշադրութեամբ կը հետեւի այդ փոփոխութիւններուն եւ կը փորձէ ցոյց տալ մէկ շարժումէն միւսին անցնելու ձեւը:



ԻՐԱՅԱՏՈՒԿ ՄՏՈՅ ՄԸ

Մարիոն իր սպաւորութիւնները շուրջիններուն փոխանցելու համար

կ'իրագործէ թուղթէ քանդակագործութիւններ: Ան կը գործածէ թրջուած եւ խէժով պատուած թուղթի կտորներ, զորս կը փակցնէ կառոյցի մը վրայ: Գլուխները, ձեռքերը եւ ոտքերը առանձին կը ձեւաւորուին: Իր քանդակները շինելու համար ան միայն մէկ կամ երկու ժամուան պէտք ունի:

ՏԵՍԱԿԱՒՈՐ ԹՈՒՂԹԵՐ

Իր քանդակներուն համար գործածած թուղթերը Մարիոն կ'առնէ իր անձնական հաւաքածոյէն: Անոնք կու գան աշխարհի շուրջ կողմերէն. Նեփալ, Հարաւային Ամերիկա, Ճափոն... Ան կրնայ գանոնք ներկել մելանով կամ ներկի փոշիներով: Ան նաեւ կը շինէ իր թուղթերը գործածելով շագանակեղևի տերեւները եւ պա-



հելով անոնց ձեւերը: Մարիոն կ'ըսէ, թէ թուղթն է, որ «կ'արտայայտուի», իսկ ինք պարզապէս շեշտը կը դնէ այդ արտայայտութեան վրայ:

ԹՈՒՂԹԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Մարիոն օդին մէջ կը պտտցնէ թուղթը վերը-տեղծելու համար անապատի մարդոց, հովուներ եւ կենդանի որբէէ տարրի շարժումը... Անցեալ տարի հիւսիսային Ափրիկէի անապատի թափառաւոր շրջիկ թուրքէկ մը տեսաւ Մարիոնի գործերը: Ան արուեստագիտուհին իր ստոյգանցաւ, թէ ան կըրցած է ներկայացնել ճիշդ այն ինչ, որ ինք կը գգայ, երբ կը պարէ: Լաւ քաջաբանք մը շարունակելու համար թուղթերու պարը:

STUDIO Lantern

• Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Ընդ. 01-268866
Ել. 03-695399

ԱՅԼԱԶԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ՄԵՐ ԱԶՔԵՐՈՒՆ ԲԻՐԵՐԸ ԵՐԲԵՄՆ ՄԵԾ Կ'ԸԼԼԱՆ, ԵՐԲԵՄՆ՝ ՊԶՏԻԿ

Լոյսը կը թափանցէ մեր աչքերուն խորքը, մեր գունաւոր ծիածանին կեդրոնը գտնուող պզտիկ ծակին՝ բիբին ընդմէջէն:

Երբ լոյսը շատ զօրաւոր ըլլայ, ծիածանը կ'ամփոփուի, իսկ երբ թեթեւ ըլլայ, կը թուլնայ: Հետեւաբար, երբ օգը շատ պայծառ է, բիբիդ տրամաշարժ շատ փոքր կ'ըլլայ (2 մմ. լայնք)՝ աչքերուդ խորքը պաշտպանելու համար:

Հակառակը կը պատահի գիշերը. բիբիդ կը մեծնայ (մինչեւ 8 մմ.) աւելի շատ լոյս առնելու համար:

Երբեմն դեղերը, յուզումները կամ կարգ մը հիւանդութիւններ կը խանգարեն աչքերուն գործունէութիւնը: Օրինակի համար, բիբիդ կրնայ շատ բացուած ըլլալ, նոյնիսկ եթէ շատ լոյս կայ:

ԻՆՉՈ՞Ւ ԾԱՌԵՐԸ ԿԱՆԱԶ ԵՆ, ԻՍԿ ԿՈՃՂԵՐԸ՝ ՍՐՃԱԳՈՅՆ

Ծառերը զանազան գոյներ ունին: Ամէն ինչ կախեալ է իրենց մէջ պարունակած նիւթերէն: Տերեւներուն կանաչը կու գայ անոնց մէջ գոյութիւն ունեցող գունաւոր նիւթէ մը՝ քլորոֆիլը (կանչոն): Այս գոյնի մասնիկը անոնց կարելիութիւնը կու տայ արեւուն լոյսը առնելու եւ գայն ուժի վերածելու:

Անան ծառը կ'արտադրէ կազ մը, որ կամաց-կամաց կը փճացնէ քլորոֆիլը: Տերեւները կը կորսնցնեն իրենց կանաչ գոյնը, դեղին-նարնջագոյն երանգ մը կը ստանան եւ, վերջապէս, կը թափին:

Կոճղը կանչոն (քլորոֆիլ) չի պարունակեր: Անոր սրճագոյն գոյնը կու գայ փայտէն եւ գայն ծածկող կեղեկէն: Եւ որովհետեւ բոլոր ծառերուն փայտը միշտ նոյն նիւթերը չեն պարունակեր, իւրաքանչիւր տեսակ ունի իրեն յատուկ գոյնը: Օրինակի համար, ցարասին կը պարունակէ պեթիլին կոչուած նիւթ մը, որ անոր կու տայ... ճերմակ գոյն:

ԻՆՉՈ՞Ւ ՄԵՐ ՈՏՔԵՐԸ ԿԸ ԹՄՐԻՆ

Արեան հազարաւոր երակներ կը գտնուին մարդկային մարմնին մէջ: Անոնք արիւնը փոխադրող խողովակներ են: Կան երակներ, որոնք հաստ են, ուրիշներ բարակ են, յաճախ՝ մազի թելի մը չափ:

Երբ ոտքի մը կամ ձեռքի մը վրայ կը ճնշենք, երակները կը սեղմուին, եւ արիւնը դիւրութեամբ չ'անցնիր: Արեան մագեթակները կը պարպուին, եւ այլեւս արիւն չեն հասցնէր մկաններուն: Մկանները շարժելու դժուարութիւն կ'ունենանք, եւ մենք զանոնք թմրած կը զգանք:

Երբ մեր դիրքը փոխենք, արիւնը դարձեալ շրջելու կը սկսի: Մագեթակները գարձեալ կը լեցուին: Այս երեւոյթն է, որ տարօրինակ զգացում մը կը յառաջացնէ՝ ասեղի զարկերու նման: Ծարժելով եւ մկանները շփելով՝ արիւնը շատ շուտ կը վերադառնայ եւ այս զգացումը կը չքանայ:

ՁՈՒԿԵՐԸ ԿԸ ՔՆԱՆԱ՞Ն

Ձուկերը չեն խուկար, սակայն անոնք կը քնանան մեզի պէս:

Հակառակ անոր, որ անոնք կոպեր չունին, անոնք կը քնանան գիշերը կամ... առտուն, ըստ իրենց տեսակին:

Բոլոր ձուկերը նոյն ձեւի անկողիններ չեն գործածեր:

Կարգ մը ձուկեր կը ծփան ջրախոտերուն միջեւ: Ուրիշներ կը պահուրտին քարերուն տակ կամ կ'իջնեն ջրուրին յատակը՝ իրենց փորին մէջ յատուկ «գրպանի» մը պարունակած օդը արտաքսելով: Թուլթակ-ձուկը կ'պչուն հեղուկով մը կը շրջապատուի եւ հոն կը մնայ առանց շարժելու:

Ընդհանրապէս, ձուկերուն գոյնը անփայլ կ'ըլլայ, երբ կը քնանան:


ՔԵԶԻ ԾԱՆՕ՞Թ ԵՆ ԵՒՆԸ ԵՒ ԵԱՆԿԸ

Եինի եւ եանկի մասին խօսող առաջին գրութիւնները 3000 տարեկան են: Ըստ անոնց, եին - եանկը գոյութիւն ունէր տիեզերքին կազմուելէն առաջ. այս երկուքը կը կազմէին մէկ տարր: Հետագային եինը եւ եանկը կը բաժնուին իրարմէ եւ կը յառաջացնեն տիեզերքը. եինը կ'ուղղուի դէպի աշխարհ, եանկը՝ դէպի երկինք:


Հետեւաբար եինը եւ եանկը իրարու հակադիր են, սակայն գիրար կ'ամբողջացնեն: Երկուքին միասին ներկայութիւնը անհրաժեշտ է:

Այս ձեւով եինի - եանկի շարժումները կը բացատրեն բնութեան երեւոյթները, որոնք կազմուած են ծնունդով, աճումով եւ մահուամբ, եղանակներու յաջորդականութեամբ, որ նոյն ատեն ցերեկներու եւ գիշերներու յաջորդականութիւնն է:


Ժ Ա Մ Ա Ն Յ




Քանի՞ հատ անօթ գոյութիւն ունի պատկերին մէջ:




Ո՞ր առարկան 3 անգամ ներկայացուած է:



Ո՞ր մեքենան 4 հանգոյց ունի:



Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու պատկերները:




Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ՓՈՐՁԱ՞Յ ԵՍ

Ի՞ՆՉՈ՞Ւ ԱԻՆԸ ԵՒ ԱՐԱԳ Է, ՊԱՂ ՁՈ՞ՒՐԸ, ԹԷ՞ ՏԱՔ ՁՈՒՐԸ

1) Գնդասեղով մը երկու ծակ բաց խաւաքարտէ երկու գաւաթներու յատակը:




2) Գաւաթներէն մէկուն մէջ պաղ ջուր լեցուր



եւ վրան սառաւեյցուր:



3) Երկրորդ գաւաթին մէջ տաք ջուր լեցուր:



4) Երկու գաւաթներէն իւրաքանչիւրը դիր թափանցիկ գաւաթի մը վրայ եւ ուսումնասիրէ՝ տաք ջուրը շատ աւելի արագ կը հոսի, քան պաղը:

Ա Յ Ի Լ

ԻՆԵՆԱՇԱՐԺԻ ԱՊԱՇՆՎԱԳՐՈՒԹԻՒՆ

85\$

• SOS FREE OF CHARGE
ԻՆԵՆԱՇԱՐԺԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՁՐԻ

ԸՍՍՅԷ. ԱՅԷՏԻ ԶԵՆՔ Բ. ՅԱՐԿ
ԸԵՈ. 01-242556 ԵՒ 01-242557

www.lemagan.com

